ԵՐԵՎԱՆ
ՔԱՂԱՔ
ՊԱՐՏԵԶ...

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՈՐՊԵՍ ՀԻՄՔ ՊԵՏՔ Է ԾԱՌԱՅԵՆ

տարածքի ֆիզիկա-աշխարհագրական առանձնահատկությունները.

օրինակ՝ չոր ցամաքային կլիմայական պայմանների դեպքում բարենպաստ միկրոկլիմայական պայմաններ պետք է ապահովել կանաչ տնկարկների և բաց ջրային ավազանների միջոցով.

քաղաք կազմավորող գործոնները.

քաղաքի զարգացման ռազմավարությունը պետք է հիմնվի բնակավայրի տեղադրությամբ պայմանավորված գործոնների վրա, ինչպիսիք են՝ պատմամշակութային արժեքները տուրիզմի զարգացման համար կամ հումքի մատչելիությունը՝ արդյունաբերության զարգացման համար.

պատմականորեն ձևավորված միջավայրը.

կառուցապատումը պետք է իրականացվի այնպես, որ պահպանվի քաղաքի յուրօրինակությունը և տարբեր ժամանակաշրջանների շինությունների ու այլ արժեքների ներդաշնակությունը:

Երեւանի գլխավոր հատակագծում ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը դրել էր այս հիմնարար սկզբունքները և ՔԱՂԱՔ-ՊԱՐՏԵԶ գաղափարը ...

Կանաչ տնկարկներն ապահովում են կենսագործունեության բարենպաստ միջավայր՝ նպաստելով քաղաքաշինական, առողջապահական և ռեկրեացիոն խնդիրների լուծմանը:

Կանաչ տարածքների անկանոն և անվերահսկելի կառուցապատումը հանգեցնում է կանաչ տնկարկների կորստյանը՝ նվազեցնելով դրանց ֆունկցիոնալ դերը, որի արդյունքում.

- փոխվում է քաղաքի միկրոկլիման, այդ թվում՝ օդի որակը,
- ուժգնանում են քամիներն ու փոշին,
- հողերը ենթարկվում են էրոզիայի,
- ուժեղանում է քաղաքային աղմուկը,
- փոխվում է թռչունների կազմը և քանակը,
- քաղաքում ձևավորվում է ագրեսիվ միջավայր:

Երևանի կանաչ տարածքներում կառուցապատումն ուղեկցվում է քաղաքաշինական նորմերի ու կանոնների խախտումներով: Վերջիններիս համաձայն ընդհանուր նշանակության ծառածածկ տարածքը Երևանում պետք է լիներ ավելի քան 2600 հեկտար (21մ^2/մարդ): Իսկ զբոսայգու տարածքը պետք է բաշխված լիներ հետևյալ կերպ.

- Կանաչ տնկարկներ և ջրամբարներ 75-80%
- Ծառուղիներ և ճանապարհներ 8-12%
- Հրապարակներ և խաղահրապարակներ 4-8%
- Կառույցներ (ներառյալ՝ սպասարկման օբյեկտներ, կարուսելներ և այլն) 2-4%

1990թ. ի վեր Երևանի ընդհանուր նշանակության ծառածածկը ընդամենը 928 հեկտարից պակասել է ավելի քան 40 տոկոսով՝ հիմնականում զբոսայգիների և այլ կանաչապատ տարածքների կառուցապատման հաշվին: Դրան գումարվել է ծառերի խնամքի բացակայությունը կամ ոչ պրոֆեսիոնալ մոտեցումը:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԾԱՌԱԾԱԾԿԻ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ ԵՆ ԿՐԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ

- «Ալմաստ» գործարանի պուրակ
- Անգլիական այգի
- Բաբայան-Ազատության խաչմերուկի անտառ-պուրակ
- Բուսաբանական այգի
- Դալմայի այգիներ
- Լվովյան փողոցին հարող անտառ-պուրակ
- Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի կանաչ զանգված
- Կենդանաբանական այգի
- Կիրովի անվան զբոսայգի
- Կոմիտասի անվան զբոսայգի
- «Հաղթանակ» զբոսայգի
- Հրազդանի կիրճի հողապահպան ծառուտներ
- Ղուկասյանի այգի
- Մանկական այգի
- Մերգելյան ինստիտուտի պուրակ
- Մկոյի անտառ
- Նորք-Մարաշ-Սարի թաղ հողապահպան անտառաշերտեր
- Շահումյանի այգի
- Պուշկինի այգի
- Սարդարի այգիներ
- Վարդավառի այգի
- Փափազյան փողոցի վերջնամասի այգի
- Օղակաձև զբոսայգի
- Օպերայի շրջակայքի պուրակներ
- Բակերի ծառեր
- Փողոցների ծառուղիներ

Ընդ որում՝ քաղաքամերձ հանգստի գոտի համարյա ընդհանրապես գոյություն չունի:

ԵՐԵՎԱՆ

ՔԱՂԱՔԻ ԿԱՆԱՉ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ԿՈՐՍՏՅԱՆ ՄԱՏՆԵԼՈՎ ԽԱԽՏՎՈՒՄ ԵՆ

ՀՀ սահմանադրությունը.

- մարդու տեղեկություններ ստանալու իրավունք
- մարդու հանգստի իրավունք

ՀՀ կողմից վավերացված միջազգային կոնվենցիաները.

- ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիա (1993)
- ՄԱԿ-ի Կենսաբազմազանության մասին կոնվենցիա (1993)
- ՄԱԿ-ի Անապատացման դեմ պայքարի կոնվենցիա (1994)

ՀՀ օրենքները.

- Բնության պահպանության մասին ՀՀ օրենսդրության հիմունքներ (1991)
- «Բնակչության սանիտարա-համաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենք (1992)
- ՀՀ անտառային օրենսգիրք (1994)
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենք (1995)
- «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998)
- «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998)
- «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» ՀՀ օրենք (1999)
- ՀՀ հողային օրենսգիրք (2001)

Ենթաօրենսդրական ակտեր.

- ՀՀ կառավարության որոշում N660 28.10.1998թ. «Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցության կարգը սահմանելու մասին»

ՀԻՇԵՆՔ,

որ առողջ շրջակա միջավայր ունենալը մարդու բնական իրավունքն է՝ սահմանված միջազգային նորմերով:

Հետամուտ լինենք մեր իրավունքների պաշտպանությանը և օրենքի գերակայությանը:

Խնդրում ենք մեզ տեղեկացնել Ձեր ծեռնարկած քայլերի մասին:

ԵՐԵՎԱՆԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՎ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ / ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵԾՆԼ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Երևան, Նալբանդյան 5, սենյակ 21, 35, 36
Հեռախոս/ֆաքս՝ 585578, 526914
էլ. փոստ՝ crd@transparency.am
www.transparency.am

Համաշխարհային ուսուցում
Հայաստան

USAID
ԱՄՆ միջազգային
զարգացման գործակալություն

Արտահայտված կարծիքները հեղինակային են և անպայման չէ, որ արտացոլեն ԱՄՆ ՄԶԳ տեսակետները: